



[ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանի այցը ՀՀ Վայոց ձորի մարզ](#), 17.08.2015

Արարատի մարզից Հովիկ Աբրահամյանն ուղևորվել է Վայոց ձորի մարզ: Առաջին կանգառը Վայք քաղաքն էր, որտեղ վարչապետը հանդիպել է բնակիչներին, ծանոթացել նաև նրանց հուզող խնդիրներին և նշել, որ կառավարությունը կքննարկի դրանց լուծման տարբերակներ: Այնուհետև վարչապետն այցելել է Գնդեվազ համայնքում գործող „Էկոֆարմ“, ՍՊԸ: Խոշոր եղջերավոր կենդանիների բուծման, հում կաթի և պանրի արտադրության համար նախատեսված անասնապահական այս համալիրը հիմնադրվել է 2013 թ. սեպտեմբերին և հիմնականում ունի կաթի արտադրության ուղղվածություն: Այդ նպատակով այստեղ բուծվում են Գերմանիայից ներկրված տոհմային կաթնամսատու երինջներ: Ընկերության մոտ 300 գլուխ տոհմային խոշոր եղջերավոր կենդանիներից նախատեսվում է տարեկան ստանալ մինչև 1.16 մլն կգ կաթ: Համալիրը նախագծված է սննդի անվտանգության միջազգային ստանդարտի պահանջներին համապատասխան և տեխնիկական հագեցվածությամբ չի զիջում եվրոպական որակի և կառավարման չափորոշիչներին: Այն ունի 15 մշտական և 45 սեզոնային աշխատող, որոնց միջին աշխատավարձը կազմում է 100-120 հազ. ՀՀ դրամ: Հովիկ Աբրահամյանի այցի հաջորդ կանգառը Ամուլսարի ոսկու հանքավայրն էր, որի հանքային իրավունքը պատկանում է „Լիդիան ինթերնեյշնլ“, ընկերության հայաստանյան մասնաճյուղը հանդիսացող „Գեոթիմ“, ընկերությանը: Վարչապետը շրջայց է կատարել Ամուլսարի ոսկու ծրագրի իրականացման վայրում: Ընկերության հանքարդյունաբերական, բնապահպանական և սոցիալական թիմերը կառավարության ղեկավարին մանրամասներ են ներկայացրել ծրագրի ներկա փուլի, Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման ընթացքի, պլանավորվող ներդրումների և ծրագրի շինարարական ու գործառնական փուլում ստեղծվելիք աշխատատեղերի վերաբերյալ: Մասնավորապես՝ „Գեոթիմ“, ընկերության գործադիր տնօրեն Հայկ Ալոյանը նշել է, որ սպասվող կապիտալ ներդրումների ծավալը կազմում է 426 մլն ԱՄՆ դոլար, ակնկալվող մուտքերը պետական բյուջե՝ մոտ 488 մլն ԱՄՆ դոլար, աշխատատեղերի թիվը շինարարության ընթացքում՝ 1300, հանքի շահագործման ընթացքում՝ 770: Մինչ օրս իրականացրած սոցիալական զարգացման ծրագրերի մեջ ներդրվել է արդեն 2 մլն ԱՄՆ դոլար, միջազգային չափանիշներով Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման հետազոտության համար ծախսվել է 5 մլն ԱՄՆ դոլար: Ամուլսարում վարչապետին ուղեկցում էր նաև

Հայաստանում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլսը: Նա ողջունել է ՀՀ կառավարության՝
„Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն, անդամակցելու
որոշումը, որը հնարավորություն կտա ապահովել ավելի մեծ հասարակական
թափանցիկություն հանքարդյունաբերության ոլորտում և կնպաստի այս ճյուղի
կայուն զարգացմանը: Վայոց ձորի աշխատանքային այցի հաջորդ օրը
կառավարության ղեկավարն այցելել է Ջերմուկում գտնվող թիվ 2 արվեստի դպրոց և
„Զատիկ,, մանկապարտեզ, ծանոթացել վերանորոգման աշխատանքների
արդյունքներին: Համայնքային զարգացման այս երկու ծրագիրն իրականացվում է
„Լիդիան ինթերնեյշնլ,, ընկերության կողմից կորպորատիվ սոցիալական
պատասխանատվության ծրագրի շրջանակում: Այցի ավարտին վարչապետը
հանդիպել է Վայոց ձորի մարզի երեք քաղաքների՝ Ջերմուկի, Եղեգնաձորի ու Վայքի
ղեկավարներին, քննարկել քաղաքների զարգացման առաջիկա ծրագրերն ու
հետագա անելիքները: Աղբյուրը՝ gov.am, 16.08.2015 Նշենք, որ Վայոց ձորի մարզ այցի
ժամանակ ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանին ուղեկցել է ՀՀ Վայոց ձորի մարզպետ
Հարություն Սարգսյանը: